

ՆՈՐ ԱՎԵԾԱՔԵՐ

Կ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1931

ԹԻԻ 17

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ինչ որ ԱՆՀՐԱԺԵՇՏ է

«ՆՈՐ ԱՎԵԾԱՔԵՐ»-Ի ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՄԵՐ ԶԱԽԱԿՆԵՐՈՒՆ ՀՈԳԵԻՈՐ ՄՆՈՒՑՈՒՄԸ

ՄԵՐ Ս. ԴԻՐԲԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԴՆԱՊԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ՄԱԿԵԴՈՆԻՈՅ ԵՒ ԹՐԱԿԻՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍԸ

ԴԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՏԵՂԱԽՈՐՈՒՄԸ

ՎԵՐ. Ե. ԲԱՍՈՒՆԻ

ՎԵՐ. ՅԿ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ՓՐՈՅ. Զ. ՊԷԶՃԵԱՆ

ՊԱՏ. Կ. ՅԱՐԱՃԵԱՆ

ԱՅԼԵՒԱՅԼ

ԱԴԱՄԱՆԴԵԱՑ ԿԵԱՆՔԷ ՓՇՈՒՐՆԵՐ

ՇՈՒՆԶ ԱՌ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԶԱՆԻՑԻ ԷԶԸ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏԳԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, ծախեցան բաժնեգիրքն է 150 շրճապատի։ Սուրբիոյ համար, և մէկ ու կէս տուար՝ տուրիչ բաժնի երկիրներու համար։

Յօդուածներու բնագիրները չեն զըրկուիր եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ։ չհրատարակուող յօդուածներու համար պէտք է զրկել փաստի ծախսը։

Յօդուածները պէտք է գրուին թուրքի մէկ էջին վրայ մեկանով, զիւրընթեռնի և մաքուր կերպով։

ՀԱՂԵՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐՃԱՐԱՆԻՆ ՆՈՒՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՑԱՆԿ 1930 ՅՈՒՆԻՍ 4-1931 ՅՈՒՆԻՍ 31. Ծախուածութիւն։

Պատ. Հ. Սարաճեան 40 շրճ., Պրն. Երուանդ Ալմսեան 15 շրճ. (կերպաս), Պր. Եագուպ Գրաճեան 28 շրճ. (կերպաս), Պրն. Արմենակ Այնիշեան 20 շրճ. (կեր.), Պրն. Ծօղէֆ ? ? ? 16 շրճ. (կերպաս), Բըզգալա Ճէմալ էֆ. 16 շրճ. (կեր.), Պրն. Ստաշ Մագուլեան 20 շրճ. (կերպաս), Պրն. Յակոբ Նաղարեան 10 շրճ. (կերպաս), Պրն. Երուանդ Համմալեան 24 շրճ. (կերպաս), (Ծախուածութիւն)

McNESS' EFFERVESCENT SALTS

ԿՈՒԶԵՍ

ՅՍՍԱԿ ԳՈՅՆ

ԼԱՒ ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ

ԱՆՑԱԻ ՈՒՂԵՂ

ՄԱՔՈՒՐ ՍՐԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ,

ՊէՏԲ Է ԳՈՐԾԱԾԵՍ Mcness' Effervescent salts ԿՈՉՈՒՄ ԱՂԵՐԸ, որ քեզ պիտի ապուտէ պնդութենէ։ Քանզի յաճախ պնդութիւնն է որ յառաջ կը բերէ գէշ գոյն, անմարսողութիւն, գլխու ցաւեր, ինքնաթուռաւորում և պաղաւուրթիւններ։

Կը գտնուի Տիարք Ն. Իշխանեանի, և Ե. Տայըեանի գեղարանները և Տիար Պէշիւր Բէլէշեանի մօտ։



ՓՈՐՁԻ

ՓՈՐՁԻ

MCNESS SHAVING CREAM

Ինչո՞ւ կը չարչարես երեսդ երբ կարելի է ածիւրեւում գործողութիւնդ չափազանց զիւրացնել։ Mcness մօրուք կապուղցնող լուղը թող վայն ընէ քեզի համար։

Կը գտնուի բոլոր յայտնի գեղարանները։

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1931

ԹԻԻ 17

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ԻՆՉ ՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

Մեր դպրոցները սկսան վերաբացուել: Կրթական գործունեությունը շրջանը սկսաւ եռուզեռի մէջ դնել ուսանողական, ուսուցչական և հոգաբարձութեան կազմերը և ծնողները: Նոր ծրագիրներ, նոր յոյսեր, նոր ակնկալութիւններ թերեւս կը խանդավառեն բոլոր շահագրգռուողները: Ամէնուն փափաքը և յոյսն է որ կրթական տարին ըլլայ գոհացուցիչ և յաջող:

Անշուշտ այս արդիւնքը ապահովելու համար նկատի առնուելիք շատ ազդեցիկներ կան: Բայց մենք հոս կ'ուզենք մասնանշել կէտ մը միայն, որ կը խորհրդէ թէ անհրաժեշտօրէն պէտք է գտնուի մեր կրթական յարկերուն տակ:

Կրթավայրը բառին լման առումովը պաշտօնը կրնայ կատարել այն ատեն երբ այն կ'ըլլայ ներշնչարան մատաղ հոգիներուն համար: Կրթական յարկերուն տակ պէտք է գտնուի մագնիսացնող, ոգեւորող մթնոլորտ մը որուն մէջ շնչող մատաղ սերունդը, անզգալարար, առանց տանջող ճիգի մղուի իր պարտ սկանութիւնները, ուսումները ընել: Այս մթնոլորտը կ'ստեղծուի ուսուցչին անձնաւորութեամբը: Ուսուցիչ մը կրնայ մեծ հմտութիւն ունենալ, և թերեւս կրնայ բռնադատել ուսանողը որ պարտականութիւնները մեքենաբար կատարէ: Բայց պէտք է զայն իր նըպատակին մէջ ձախողած նկատել եթէ չի յաջողիր աշակերտին մէջ ունէ նիւթ

մը ուսանելու տենչը արթնցնել: Դըպրոցականին մէջ արթնցած սորվելու զօրաւոր փափաքը շատ աւելի կարեւոր է քան անոր սորված ունէ մէկ նիւթը:

Ուսուցիչներ կան որոնք հակառակ իրենց շատ մը կարողութիւններուն իրենց մարմնական և հոգեկան արտայայտութեամբը մատաղ հոգիները կը խամբեցնեն, նոր ծագող լոյսերը կը մարեն, խանդը կ'ապանեն: Մանուկը կը դառնայ անհոգի մեքենայ մը, որ միայն ուսուցչին զօրովը կը դառնայ: Եւ դպրոցը կը դառնայ տանջարան մը:

Ուսուցիչներ կան որոնք իրենց անձնաւորութեան մէջ թաքուն ունին չեմ գիտեր ինչ մը, որ անոնց գէմքէն, աչքերէն, շուրթերէն, մատերէն, կ'արտայայտուի և կը ճառագայթէ, լեցնելով մթնոլորտը անուշ, առինքնող, տաքցնող, խանդավառող շունչով մը: Եւ դպրոցականը անզգալարար կ'ըմպէ այս ծորումը, կ'զգայ այս լոյսին տաքութիւնը, կը խայտայ անոր զուարթութեամբը, և ան կը լծուի ոչ թէ մեքենական այլ ստեղծագործ, ոչ թէ բռնադատեալ այլ կամաւոր աշխատանքի:

Եթէ մէկը չունի այս ոգին, առաջին առթիւ պէտք ձգէ այդ սրբավայրին սեմը, չվերադառնալու համար հոն մինչև որ այդ ոգին տիրանայ:

Ամէն թէ ունի այս խորհրդաւոր ոյժէն, որ սակայն կը կարօտի մշակումի: Այս ոգին երկու մեծագոյն նշաններն են գնահատում և կարեկցութիւն:

«ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ» Ի ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

«Նոր Աւետարներ» իր էջերը չի սահմանափակեր միայն մէկ դասակարգէ, մէկ գաղափարէ, մէկ տիպէ աճերու: Ան կը հիւրընկալէ ամէն հոտանքի պատկանող դէմքերու գրութիւնները, նոյն խնդրին շուրջ տարակարծիք պատուող անձերու յօդուածները երբ անոնց մէջ կը գտնէ մասնաւոր շահեկանութիւն մը, միտքերը եւ հոգիները չինիչ գործունէութեան մղող գրգիռ մը: Քանզի՝ ունէ արժէք մը լման ըմբռնելու տեսնելու, և պարփակելու համար պէտք է տարբեր անկիւններէ զիտել զայն, կամ այնպէս զիտողներու տեսութիւնն նկատի առնել: Ասիկայ կը խորհինք թէ անհրաժեշտ է ողջամիտ և հաւատարակ շնորհալու ղեկավար չի նշանակեր թէ «Նոր Աւետարներ» բոլոր յօդուածագիրներու ամէն գաղափարին համակարծիք կը գտնուի: Բոլոր յօդուածները անպայման խմբագրութեան տեսակէտները չեն ցոյցնիր: Հետեւաբար «Նոր Աւետարներ» երբ պէտք կը տեսնէ այդ նութիւնը շուրջ իր տեսակէտները կը պարզէ իր խմբագրականներով:

Ընթացք մ'ունենալու համար:

Ասիկայ չի նշանակեր թէ «Նոր Աւետարներ» բոլոր յօդուածագիրներու ամէն գաղափարին համակարծիք կը գտնուի: Բոլոր յօդուածները անպայման խմբագրութեան տեսակէտները չեն ցոյցնիր: Հետեւաբար «Նոր Աւետարներ» երբ պէտք կը տեսնէ այդ նութիւնը շուրջ իր տեսակէտները կը պարզէ իր խմբագրականներով:

Բայց «Նոր Աւետարներ» սահման ունի իր այս ուղղութիւնը յառաջ տանելու մէջ: Երբ յօդուածները վիճարանական բնոյթ մը ստանան ա'լ կ'արդարեւ անոնք անոնց տեղ չտալ հասարակաց օգտին համար:

ԱՂԱՄԱՆԴԵԱՅ ԿԵԱՆՔԷՆ ՓՇՈՒՐՆԵՐ

Մը. Քոնուէլ իրիկուան հոգեւոր պաշտօնը լրացուցած էր, ժողովուրդէն երիտասարդ մը իր քովը եկաւ: Քոնուէլ հասկցաւ թէ բան մը անհանգիստ կ'ընէր զայն: Իր քովը նստեցուց երիտասարդը, որ մի քանի վայրկեանի մէջ պատմեց ինչ որ իր հանգիստը կը վերջովէր:

— Տը. Քոնուէլ, ըսաւ երիտասարդը մէկէն, շատ քիչ զրամ կը շահիմ, և աւելին ալ շահելու հաւանականութիւն չունիմ ներկայիս: Բայց ինձմէ զատ պէտք է մօրս տպրուստն ալ հոգամ: Այս կերպով սէնթ մ'իսկ չեմ կրնար աւելցնել: Այսու հանգերձ իմ ջերմ փափաքս է եկեղեցւոյ հովիւ մ'ըլլալ, այս է իմ միակ փառասիրութիւնս: Կա՞յ բան մը զոր ես կրնամ ընել:

— Ունէ մարդ, ըսաւ Քոնուէլ, որ պէտք եղած հաստատամտութիւնն ու մեծաբաղձութիւնը ունի՝ իր փափաքին գոհացում տալու բաւական չափով կըր-

նայ գիշերները ուսումնասիրել:

— Այսպէս ընելու պատրաստ եմ, շարունակեց երիտասարդը, բայց մինչեւ հիմա չեմ կրցած հասկնալ թէ ինչպէ՞ս կարելի է այս: Կ'ուզեմ ուսումնասիրել, պատրաստ եմ ամէն մէկ չգրադեալ վայրկեանս ասոր տրամադրել, բայց չեմ գիտեր թէ ինչպէ՞ս կըրնամ ընել:

Քոնուէլ մի քանի վայրկեան կը խորհի: Երիտասարդին փափաքը զօրաւոր և մեծաբաղձութիւնը հաստատ էր, պէտք եղած չափով զօրաւոր մարմին և զօրաւոր միտք ունէր: և սովորական կարեկցութենէն աւելին կը կսրօտէր:

— Ամէն շաբաթ, գիշեր մը քովս եկուր, և ես պիտի սկսիմ քեզի ուսուցանել, ըսաւ Տը. Քոնուէլ, այդ կերպով դուն գտնէ սկսած պիտի ըլլաս: Այս ըսաւ և օրը որոշեց:

Երիտասարդին զէմքը փալկեցաւ և

խանդով ըստ թէ որոշեալ ատենին պիտի գայ եւ մեկնեցաւ: Բայց քիչ ետքը աճապարանքով վերադարձաւ ու հարցուց:

— Կրնամ ինծի հետ բարեկամ մ'ալ բերիլ:

— Կրնաս ուզածիդ չափ բերիլ, պատասխանեց Գոնուէլ:

Որոշեալ իրիկունը երիտասարդը իր վեց ընկերներովը եկաւ: Այդ առաջին իրիկունը Գոնուէլ յօգտաւ Լատիներէն դաս տալ անոնց:

Աշակերտութեան թիւը, որ առաջին իրիկունը 7 էր, երբորդ իրիկունը 40ի բարձրացաւ: Քոնուէլ ուրիշները օգնութեան հրաւիրեց, ապա սենեակ մը վարձեց, քիչ ետքը սենեակը շէնքի փոխուեցաւ: Մի քանի աշակերտներով եւ կամաւոր ուսուցիչներով սկսած այս դպրոցը մեծցաւ, և այսպէս գոյու-թիւն առաւ կրթական հաստատութիւն մը որ քիչ ետքը կոչուեցաւ Թէմփլ Համալսարանը նախագահութեամբ Տր. Գոնուէլի:

ԽՈՐ ՇՈՒՆՉ ԱՌ

«Պէտք եղածին պէս շունչ առնել պէտք եղածին պէս ապրիլ է», կ'ըսէ Եոկի փիլիսոփան: «Շունչը այն առաջն է որմէ կը շինուի ձայնը», կ'ըսէ ձայնի փորձագէտը: Մարմնական կեցողութիւն փորձագէտին առաջին պատուէրն է թոքերը լեցնել: Գեղեցկութեան մասնագէտը կ'ըսէ թէ լաւ շնչառութեամբ յառաջ եկած արեան զօրացած շրջանը գոյնիդ բարելաւման համար շատ աւելի պիտի ծառայէ քան բոլոր կեանքիդ միջոցին կատարուած մասածը: Հոգեբանը կ'ըսէ թէ բարոյալքումի զգացումը կրնայ տկար շնչառութիւնէն ծագիլ: Իսկ բժիշկը կը ըսէ թէ շնչառութիւնը կեանքի առաջին կենսական արարքն է: Մեզմէ շատերը միայն կեանքը պահելու բաւականաչափ շունչ կ'առնենք, և ոչ՝ զայն կորովի կերպով ապրելու չափ:

Մենք մեր թոքերուն միայն վերի մասերը գործածելու այնքան վարժուած ենք որ սա կարծիքը կ'ունենանք թէ անոնք կ'ուրձեն վարչէն իջնար: Բայց իրականին մէջ թոքերը կողոսկրներուն երկու կողմերէն վար մինչեւ մէջքը կը տարածուին: Մինչև որ դուն թոքի այս կտրիւնը վարի մասերը չգործածես

շնչառութեան ատեն՝ ապահովագրութեան ընկերութեան համար վտանգ մըն ես:

Յայտնի մասնագէտ մը կ'ըսէ թէ շնչառութենէդ աւելի լաւ չես կրնար խօսիլ: Առանց առատ օդի քու ձայնդ անգոյն և տկար պիտի ըլլայ:

Հոգեբանը կ'ըսէ թէ քու տրամադրութիւնդ կ'առաջարկէ կարելի է քու շնչառութեամբդ: Եթէ ջղային, գրգռուած, բարկացող ես խոր շունչ առ: Հրաշալի կերպով պիտի հանդարտուի:

Շատեր գէշ կեցուածք ունին, քանզի գէշ կերպով շնչառութիւն կ'ընեն: Երբ կուրծքերը գոգաւոր և իրանները ծուռ են առաջին անգամ շնչառութիւնը կը վտանգուի: Լաւ ուռած թոքերը մարմինը կը շտկեն:

Եթէ կը հետաքրքրուիս դիտնալ թէ լաւ շնչառութիւն ունիս թէ գէշ՝ սա կերպը փորձէ: Գոտիդ թուլցուր, մէջքիդ և կուրծքիդ վարի գլծին ճիշդ մէջտեղը զայն տեղաւորէ: Թոքերդ բոլորովին պարպէ գօտին կարելի եղածին չափ նեղացնելով, ապա սկսէ թոքերդ լեցնել օդով որչափ որ կրնաս և տես թէ գօտին որչափ կ'ընդլայնի: Ահա այս տեղէն կրնաս չափել կուրծ-

քիդ ծաւալը, և ոչ անութներուդ տակէն, ինչպէս որ մարգանքի ուսուցիչդ սխալմամբ կ'ընէ:

Կուրծքդ ընդլայնել մի՛ փորձեր միայն առջևի կողմէն զայն ուռեցնելով: Ընդլայնումը առջեւէն, կոնակէն և կողերէն ալ պէտք է ըլլայ:

«Սովորաբար շնչառութիւնը անգիտակցաբար պէտք է ըլլայ» կ'սէ Տոքթ. Է. Լ. Ֆիսք, «բայց ամէն օր պէտք է խոր շնչառութեան մարզանքներ կատարել: Սենեակներու մէջ աշխատելու ստիպուած մարդիկ կրնան այսպիսի կեանքի մը բոլոր փնտնեքուն տեղը լեցնել բացօդեայ տեղերու մէջ 12 անգամ խոր շունչ առնելով, երբոր պատեհութիւն գտնեն»:

Առանց քու ստոծանիիդ (փորը կուրծքէն զատող հորիզոնական թաղանթ) օգնութեան չես կրնար պէտք եղածին պէս շունչ առնել: Ստոծանին կուրծքին յատակն է, և գմբեթաձեւ մօտին մըն է, միայն թէ գմբեթը գլխիվայր կը կենայ: Երբ շունչ առնենք գմբեթը դէպի վար կը խորունկնայ և այս կերպով կուրծքի փոսը կ'ընդարձակի ներս խռժող օդին տեղ շինելու համար: Երբ շունչը դուրս կուտանք գմբեթը դէպի վեր կ'ըլլէ և հարթ ձեւ մը կ'առնէ, այս կերպով ան օդը դուրս կը քշէ: Առանց այս կարեւոր մօտնի չես կրնար ձայն մը հանել, չես կրնար հեռալ, խոնջալ, կամ կոկորդ մաքրել: Այլ մարդուն ստոծանին մարմնին մէջ աւելի վաթ գետեղուած է քան կին մարդունը, այս պատճառաւ այլ մարդուն կուրծքը աւելի տեղ կը պարունակէ: Ն. թէ այլ մարդուն գործօն կեանքի սովորութիւնները այս մօտնը աւելի զօրաւոր ըրած են: Կիներ, շատ քիչ բացառութեամբ, խոր շունչ առնողներ չեն, և միշտ ինքնակալ են իրենց ստոծանիները անխնայամ թողլու:

Բարեբաղդաբար բնութիւնը մեզի

սորվեցուցած է ստոծանին գործածելու կերպը: Մանուկները, ինչպէս նաեւ քնացողները, չիտակ շունչ կ'առնեն: Երբ մենք մեծնանք կամ արթննանք արգելքներ յառաջ կը բերենք, որոնք չեն թողար որ ստոծանին ազատօրէն գործէ: Սխալ գործելու վարժուած ստոծանին նորէն չիտակ գործել տալու համար, կռնակիդ վրայ գետինը պտուկէ, բոլոր աշխարհի հոգիքը մէկ կողմ դիր և թող որ այդ մեծ մօտնը բնական կերպով գործէ: Եթէ այս շարունակես՝ մինչեւ որ ան սովորութիւն մը դառնայ, կայնած ատենդ ալ այդպէս պիտի շունչ առնես: Եէրիցա, որուն օքերաներու մէջ կատարած դերերը լարախաղացի մը շարժումները մտաբերել կուտան, սովորութիւն ըրած էր կռնակին վրայ պտուկած ատեն սիրելի եղանակ մը երգել: Նա կ'ըսէ թէ այս կերպով ինք երգել սորված է:

Շնչառութեան միակ նպատակն է մեր մարմնին մէջ թթուածին առնել, քանզի առանց թթուածինի մենք չուտով կը մեռնինք: Մեր մարմնին մէջ ամէն կենսական գործունէութիւնը՝ կատարուելու համար թթուածինէ կախում ունի: Որչափ որ շատ թթուածին առնես այնքան աւելի յոտակ գոյն պիտի ունենաս, այնքան աւելի աշխուժօտ և ուշիմ պիտի ըլլաս: Եթէ մարմնապէս ինկած, մտաւորապէս պարտուած, խոժոռ կամ խիստ հոգեկոծ, եթէ նոյնիսկ քիչ մը խենդ ես, լաւագոյն խրատը քեզի համար սա է. «Շո՛ւնչ առ»:

The Reader's Digest էն
ամփոփարար

Էտիսըն ըսած է. Երբ ես համոզուիմ թէ տեսութիւն, հանգիստութիւն և հաշիւ գործածելով հետապնդուած արգելքներ հասնիլ անկարելի է այն տեսն գիտեմ թէ մեծ գիւտի մը եղիբքը կը գտնուիմ:

ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՆ ՀՈԳԵՒՈՐ ՍՆՈՒՑՈՒՄԸ

(Շարունակութիւն եւ Վերջ)

Գ. Մի՛ թերանար պէտք եղած խրատը, արգարարութիւնը, յանդիմանութիւնն ու պատիժը յարմար կերպով զաւկիդ տալու։ Ասոր մէջ փոխանակ բարկութեան եւ խտութեան, համոզիչ խօսքեր գործածէ՛։ Անոնց պարտականութիւնները կամ թերութիւնները Աստուծոյ խօսքէն ցուցնելու ջանա՛հեցութեամբ, աղօթքով եւ Աստուծոյ հոգւոյն առաջնորդութիւնը խնդրելով։ Պօղոս Առաքեալ կը պատուիրէ. «Հայրե՛ր, ձեր որդիները մի՛ բարկացնէք»։ Այսինքն զանոնք խտացնող խօսքեր մի՛ խօսիք եւ այդպիսի վարմունք մի՛ ցուցնէք, չըլլայ որ անոնք ձեզմէ պաշտին եւ կամ ձեզի դէմ ընդդիւին։ Այսու հանգերձ զանոնք մի՛ շփացնէք. անոնց հանդէպ թոյլ եւ պէտք եղածէն աւելի ներողամիտ գտնուիլ սխալ է։ Աստուած մեզ պատասխանատու կը նկատէ։ Մեր զաւակները Աստուծմէ աւելի յարգել մեղք է։ Զմոռնանք այն պատգամը զոր Աստուած Հեղի քահանային զրկեց։ Միւս կողմէն կը ճանչնանք շատ մը ծնողներ որոնք կը կարծեն թէ աւելորդ է իրենց զաւակներուն, մանաւանդ տարիքը առածներուն, խօսիլ։ Այսպէս ըսել եւ յուսահատիլ ալ չիտակ չէ։ Հեղութեամբ հանդերձ հաստատամտութիւն ցոյց տուէք։ Թող անոնք համոզուին (1) թէ դուք զանոնք անկեղծօրէն կը սիրէք, (2) թէ ոչ մէկ բան չի կրնար ձեզ ձեր սկզբունքէն չեղեցնել, (3) եւ թէ ձեր այս հաստատամտութիւնն ալ անոնց օգտին համար է։ Առանց խիստ ըլլալու հաստատամիտ սկզբունքի եւ վարքի տէր կրնանք ըլլալ։ Վերջապէս, մեր զաւակները հակառակ մեր բոլոր հոգածութեան եւ ջանքերուն, բոլոր մեր ազդա-

րարութեանց եւ խրատներուն եթէ սխալ ճամբուն կը հետեւին, պէտք է հաւատքով շարունակ աղօթենք ու անոնք դարձի գան։

Դ. Մեր կեանքով պէտք է մեր զաւակներուն լաւ օրինակ ըլլանք։ Բարեպաշտութեան հրապորիչ գեղեցկութիւնը մեր կեանքին մէջ ցուցնենք, եւ հաւատանք թէ անոր լռիկ ազդեցութիւնը մեծ եւ խոր պիտի ըլլայ։ Այնպէս որ, եթէ քիչ հոգք մեր զաւակները նայնիսկ սկսին մեր հեղինակութիւնը չճանչնալու եւ մեր խօսքերուն չանսալու, «առանց խօսքի» Տէրօջը համար շահուին։ Ասոր համար մենք առանց տրտնջալու պէտք է զուարթ բնութիւն, բարոյական կորով, անձաձիր օգնելու եւ ծառայելու ոգի, քաղցրաբարոյութիւն, կարեկցութիւն, աղօթասիրութիւն ունենանք։ Քանզի աղօթքը շատ գործ կը տեսնէ, եւ սրտերուն մէջ ճամբայ կը բանայ Ս. Հոգիի գործունէութեան համար։ Աղօթքը՝ նախ մեր մէջ յարմար հոգի եւ պայմաններ կ'ստեղծէ. ան մեզի պէտք եղած բարոյական ոյժն ու իմաստութիւնը կուտայ՝ սրտնեղութիւն, համբերութիւն, անվհատութիւն, քաղցրաբարոյութիւն, հեղութիւն եւ խոնարհութիւն, կորով եւ հաստատամտութիւն ցուցնելու համար։ Երկրորդ՝ Աստուծոյ հոգին մեր զաւակներուն սիրտերն ալ կրնայ կակուղցնել եւ փրկել, այնպէս որ աղօթքով Աստուծմէ խնդրելու ենք որ իր հոգիով մեր զաւակներուն սրտին մէջ շարունակ գործէ։ Վերջապէս, անկեղծ աղօթասիրութիւնը մեր բոլոր ընտանեկան մթնոլորտը կը փոխէ։ Ասկէ զատ մեր զաւակները մեր մէջ գործնականապէս նըուերական բաներու դէմ յարգանք պէտք

է տեսնեն: Անոնք պէտք է համոզուին որ մենք խղճին անսալով կ'ապրինք: Եթէ այսպէս համոզուին, ուշ կամ կանուխ մեր խօսքին պիտի համակերպին: Եթէ դուն Աստուծոյ հնազանդիս քու զաւակներուդ ալ քեզի հնազանդիլը և քեզ յարգելը աւելի դիւրին և հաւանական կը դառնայ:

Ե. Մեր կեանքին ամենակարեւոր մէկ նպատակը պէտք է ըլլայ մեր զաւակները Քրիստոսի առաջնորդել: Առաջին երեք Աւետարանները ճիշդ նոյն կարգով կը պատմեն թէ կարգ մը մայրեր իրենց մանուկները ի՛նչպէս Յիսուսի բերին: Այդ գեղեցիկ պատմութիւնը լաւ օրինակ մըն է զաւակները Քրիստոսի առաջնորդելու մասին: Թեւեւ կրնայ հարցուիլ թէ այսօր ի՛նչպէս մեր զաւակները Քրիստոսի կրնանք առաջնորդել: Այս մասին շատ բան կրնանք ընել և պէտք է ընենք: Է՛ն վստահելի կերպը զաւակդ Յիսուսի յանձնել է. բայց Յիսուսի յանձնելու համար պէտք է նախ հաւատքով և անձնատուութեամբ Յիսուսի կապուած ըլլալ: Քանզի Յիսուս ամէն պատասխանատուութիւնը կ'ստանձնէ իրը եղողին համար: Զաւակդ պիտի թաղուի Յիսուսի գայ, և զայն դո՛ւն բերելու ես. կերպին մասին խորհէ՛, աղօթէ: Ամէն անգամ Ս. Հոգին այս մասին քեզի ինչ որ ցուցնէ, կատարելիք ինչ պարտականութիւն որ աչքիդ առջեւ դնէ առանց դանդաղելու զայն կատարէ: Զոր օր. հեռակայ զաւակիդ մեղմ ազդարար նամակ պէտք է գրել, անպատճառ զրէ զայն: Համբարութեամբ, հաւատքով, յարատեւութեամբ, Ս. Հոգիէն օգնութիւն, առաջնորդութիւն և խմաստութիւն խնդրելով աշխատէ. և վստահ եղիլ որ վերջապէս ջանքիդ արդիւնքը պիտի տեսնես: Բայց միշտ սա կէտը մտքիդ մէջ լաւ պահէ, որ պիտի և նախ մեր մէջը զննուի այն հոգեւոր կեանքը՝ զոր կ'ուզենք ա-

նոնց մէջ յառաջ եկած տեսնել: Մի՛ մոռնար Պօղոս Առաքեալի զրածը Տիմէթէոսի մօրը և մեծ մօրը մասին:

Այս առթիւ վերջին ըսելիքս սա է: Մանկութեան միջոցին քու մկրտել աւելած զաւակիդ համար քու ըրած ուխտդ և խոստումդ մի՛ մոռնար. զայն միշտ միտքդ պահէ, խոստումդ հաւատարմօրէն կատարէ, և զայն յիշել տուր, հասկցուր նաեւ զաւակիդ: Աղօթէ՛ և ջանա՛ որ մկրտուած զաւակդ, որչափ որ կարելի է, իր մատաղ հասակին մէջ վերստին ծնանի և Քրիստոսի Լիեղեցիին անդամ ըլլայ: Մանուկի մկրտութիւնը միայն այս կերպով կատարեալ կ'ըլլայ, և շնորհքի միջոց մը կ'ըլլայ: Հակառակ պարագային անիկայ ամէնէն անխման ծէս մը կը դառնայ:

Մէքսիքոյի մէջ Սպանացի կղերնիքու կողմէ մկրտուած բնիկները քիչ ետքը իրենց մկրտութիւնը և նոյն իսկ իրենց տրուած նոր քրիստոնէական տնունները մոռցած էին: Ասիկայ ճիշտ էր նաեւ Աւիլիկէի Գոնկօ կոչուած շըրջանին մէջ Փորթուկալցի քահանաներու մկրտած տեղացիներուն համար: Արդեօք մեր մէջ ալ կ'ա՞յ այդպիսիներ, որ մանկութեան միջոցին իրենց մկրտուած ըլլալը կը մոռնան կամ կ'ուրատուած ըլլալը կը մոռնան քրիստոնէայ ըլլան, նոյն իսկ իրենց քրիստոնէայ ըլլալը կը մոռնան: Դուն պէտք է մանկութեանդ մկրտութիւնը հաստատես և լրացնես:

Մր. Ուէսլիի այս մասին վարդապետութիւնը ուշադրութեան արժանի է: Մանուկի մկրտութիւնը իր հոգեւոր նըպատակին զործածելու համար ան զօրաւոր կերպով կը յանձնարարէ Ձիլիփ Հէնրիի օրինակին հետեւիլ: Աստուծոյ այս զործիչը միւս բոլոր հովիւներէն շատ աւելի բարձր և օգտակար կերպ մ'ունէր մանուկի մկրտութիւնը իր կատարեալ հոգեւոր նպատակին ծառայեցնելու համար: Ան՝ իր այս կեր-

պը իր զաւակներուն վրայ փորձած էր, և զայն կը յանձնարարէր իրենց մանուկները մկրտել տուող բոլոր ծնողներուն: Անիկայ մկրտութեան ուխտագիր մը բանաձեւած էր հետեւեալ բաներով. «Ես կ'ընդունիմ Հայր Աստուածը իբր իմ հայրս, Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոսը՝ իբր իմ փրկիչս, Ս. Հոգին իբր իմ մխիթարիչս, ուսուցիչս, առաջնորդս և զիս սրբազործողը, և Աստուածաշունչը՝ իբր իմ բոլոր շարժումներս վարող կանոնը: Ամէն պարագային Աստուծոյ ժողովուրդը իմ ժողովուրդս պիտի ըլլայ: Այս ուխտը կը կատարեմ գիտակցաբար, ազատ կամքով և յաւիտենական ըլլալու պայմանով»: Ամէն կիրակի իրիկուն այս ուխտը իր զաւակներուն կրկնել կուտար: Եւ երբ հազիւ գրեւոր կարող կ'ըլլային այս ուխտագրէն մէկ մէկ օրինակ անոնց զրել կուտար և ստորագրել տալէ ետքը իր

զգրոցին մէջ կը պահէր, ու կ'ըսէր. «Հիմա ասիկայ ձեզի վկայելու համար պիտի պահեմ»: Երբ մեռաւ իր բոլոր զաւակներուն ստորագրութեամբ այս ուխտագրին պատճէնները գրողը զընուեցան: Բայց երբեք չէր ստիպուած այս թուղթը գրողէն հանելով անոնց երեսին զարնելու: Աստուծոյ շնորհքով բոլորն ալ իրենց ուխտը պահած էին: Ի՛նչ երանելի և օրհնեալ ընտանիք:

Ազօթենք որ Ս. Հոգին մեզի՝ ծնողներուն՝ ցուցնէ թէ ի՛նչ է մեր պարտականութիւնը մեր զաւակներուն հանդէպ: Մեր զաւակներուն հոգեւոր կըրթութեան և զանոնք կարելի եղածին չափ Քրիստոսի առաջնորդելու մասին նոր տեսիլք և նոր որոշում ունենանք, և մեր Տէրոջ աղաչենք որ իր կամքը կատարելու համար մեզի ոյժ շնորհէ: Բեռնապ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

ՄԵՐ Ս. ԳԻՐՔԸ *

Ս. Գիրքը գրի առնուած Աստուծոյ խօսքն է: Ս. Գիրքը հին գիրք մըն է: Ս. Գիրքը աշխարհի հնագոյն գիրքը չէ: Ս. Գրքի հնագոյն մասը Բ. Ա. 1200ին գրուած է. իսկ Եզրիպոսի մէջ երեւան եկած կարգ մը աղիւսներու և քարերու վրայ տեսնուած արձանագրութիւնները Ս. Գրքէն աւելի քան 3000 տարի հին են:

Առաջին գրութիւնը Բաբելոնի մէջ աղիւսներու վրայ մեղանով կը գրուէին և ապա աղիւսը փուռի մէջ կը թրծէին: Ետքը, Բ. Ա. 2000 թուականին, սկսան պապիրոսի վրայ գրել: Բ. Ա. 1200 ին Հրեաները կաշիի վրայ գրեցին: Եւ կը թուի թէ ամէնէն ետքը մագաղաթի վրայ գրելու կերպը ընդունուեցաւ:

Հիմա գոյ եղող հնագոյն եբրայական

արձանագրութիւնք Մովարի և Սելովամի քարեր անունով ծանօթ եղողներն են: Առնցմէ առաջինը Դ. Թագր. 3 ի մէջ յիշուած Ամրի, Աքաաբ, Յովրամ, Յովսափատ թագաւորներու պատմութիւնը կը պարունակէ: Սելովամի քարին վրայ արձանագրուած է Դ. Թագ. 20.20 ի մէջ յիշուած ջրանցքի և աւազանի պատմութիւնը:

Սելովամի արձանագրութեան գիւտը զարմանալի կերպով պատահած է: Տըղայ մը 1880 ին Սելովամի աւազանը ինկաւ: Ազատուելէ ետքը ան պատմեց թէ՝ մինչ ջուրի մէջ խեղդուելու վտանգին մէջ էր, ջուրին մէջ պատին վրայ գիրեր տեսած էր: Աւազանը չորցուցին և 2600 տարիներէ ի վեր գաղտնի մնացած արձանագրութիւնը երևաւ, որով Եզեկիա թագաւորը կը

*WILLIAM HALLOWAY MAIN ի «OUR BIBLE» Դըրբէն ամփոփուած: Ծ. Յօդագրի.

պատմէ թէ այս ջուրը ուսկի՛ց և ինչ-պէ՛ս բերել տուած է :

Ս. Գրքի լեզուն Եբրայեցերէն է, և մասամբ միայն՝ արամերէն :

Նոր Կտակարանի լեզուն Յունարէն է : Առաքելական դարուն քաղաքակրթութեան և փիլիսոփայութեան լեզուն Պղատոնի և Մեծն Աղեքսանդրի լեզուն էր, որով գրեցին առաքեալները իրենց պատգամները :

Ս. Գրքի մասին խօսելու ատեն պէտք է մտաբերել թէ մամուլը շատ նոր գիւտ մըն է, և թէ Ս. Գրքը ժամանակին ձեռագրով գրուած և ձեռագիրները իրարմէ ընդօրինակուած են : Հիներուն անձանք չէր կէտադրութիւնը, և բոլոր գիրքը իբր մէկ բառ՝ տառերը անընդմիջաբար իրարու ետեւէ ըլլալով կ'ընդօրինակուէր : Ահա այս պատճառաւ շատ բնական էր որ օրինակներու մէջ տարբերութիւններ գլտնուէին. բայց այս տարբերութիւնները նիւթին էական մասին ազդող տեսակէ չեն :

Այսօր ձեռագիր Ս. Գրքի կամ անոր մասերուն օրինակներուն թիւը 30,000 է, որոնք մամուլի գիւտէն առաջ գրուած են : Ասոնց հնագոյները և ամէնէն արժէքաւորներն են Եօթնասնից թարգմանութիւնը, Ասորականը (սիրեաք), Վրացերէն, Կոթերէն, Հայերէն, Ղըպտերէն, Եթովպերէն և Լատիներէն թարգմանութիւններու օրինակները :

Ս. Գրքի վրայ նոր լոյս սփռող և անոր խաղութիւնը հաստատող բաներէն մէկն է պեղումները : Մինչեւ 100 տարի առաջ Ս. Գրքի ստուգութիւնը հաստատող միակ աղբիւրը Ս. Գրքը ինքն էր : Այս պատճառաւ Ս. Գրքի շատ մը պատմութիւններն ու զէպքերը քննադատներու կողմէ իբր առասպել կը մերժուէին :

Դ. Թագ. 18 13—16 այսօր կ'զմին տըրներու վրայ գրուած գտնուեցաւ :

Քեռացիներու պատմական ըլլալուն մասին կասկածը փարատեցաւ : Իբր առասպել նկատուած Սարկոնի գերեզմանը գտնուեցաւ : Այսօր կրնաւ 6000 տարուան պատմութիւնը կարգալ :

Այսօր գիւրութեամբ կը մեկնուի փարաւոնի ներկայանալէ առաջ Յովսէփի ամիւրոյնը, այդ ատենի սովորութեան համեմատ փառաւորի կողմէ անոր վզին ոսկի շղթայ անցուելը, Եգիպտոսի թագաւորին կողմէ Աբրահամի ընդունուելը և մեծարուելը : Քանզի այդ ատենի թագաւորները իրենց ցեղակից և իրեն պէս հովիւներ էին : Այսօր պատմական իրողութիւն մ'է թէ երբ ճնշուի թագաւորները՝ Եգիպտոսէն արտաքսուելով Եգիպտացի արքաները վերադարձան «Յովսէփը չճանչցող թագաւոր մը երեւան ելաւ» :

Էլ դապի մէջ պեղումներու իբր արգիւնք երեւան ելած 40 ի չափ թագաւորներու և թագուհիներու մումիաներուն մէջ գտնուեցան Սէթի Ա. և Բամսէս Բ. ի մումիաները, որոնք Իսրայէլը չարչարեցին : Մինչգեւ Իսրայելացիներու Եգիպտոսէ ելքին ատեն իշխող փարաւոն Մէնէփթայի մումիան չգրտնուեցաւ : Արդ ասիկայ բաւական չէ՞ փաստելու թէ այդ փարաւոնը Կարմիր Ծովի մէջ խեղդուած է :

Պեղումներու իբր արդիւնք ըլլալով մեր Ս. Գրքը նոր գիրք մը եղաւ : Ուր քաղաքը, Աբրահամի հայրենիքը, յարութիւն առաւ : Կը տեսնենք որ 4000 տարի առաջ հոն քաղաքակիրթ ժողովուրդ մը կ'ապրէր, բանաստեղծներ երգեր կը գրէին, աստղաբաշխներ երկնակամարը կը խուզարկէին, արհեստաւորները նուրբ առտին առարկաներ կը շինէին, գրողներ կ'զմին տըրներու վրայ իրենց մտքին յղացումները կ'արձանագրէին : Այսու հանգերձ, ինչպէս որ Մր. Փրայս կ'ըսէ, «Աշխարհիս մէջ ամէնէն աւելի... գիրքը Ս. Գրքն է :

Սրտնի երգերուն հետ չի կրնար բեւե
երգ մը բաղդատուիլ, մեր մարգարէնե-
րուն նման խօսող չկայ, մեր Ս. Գրք-
քին քաղաքականութեան նման քաղա-
քականութիւն չկայ:

Ս. Գիրքը ի՞նչ է մեզի համար: Ա.
Մեր հոգիները կը սնուցանէ: Բ. Աս-
տուծոյ մասին մեզի կ'ուսուցանէ: Ս.
Գրքէն կը սորվինք որ մեր առաջին
պարտականութիւնը Աստուծոյ հնա-
զանդիւ է: Անոր խօսքը մեր ոյժն է:
Անհաւատ Վոլթէր ծաղրանքի նիւթ
գանելու համար մինչ Ս. Գիրքը կը
պրպտէր 51րդ սաղմօսը կը բանայ և սա
համարը կը կարգայ. «Ի՞մ մեղքերէս ե-
րեսդ ծածկէ, ու բոլոր անօրէնութիւն-
ներս ջնջէ: Ո՛վ Աստուած, ի՞մ մէջս
մաքուր սիրտ ոտեղծէ, և ի՞մ ներսիցիս
ուղիղ հոգի նորոգէ:» Երբ այս կար-
գաց դողդաղացի անզգայ գետին ինկաւ:
Ս. Գիրքը մեր աղօթքին տտաղծ և մեր
քարոզին նիւթ կուտայ: «Աստուծոյ
խօսքը քարոզէ», կ'ըսէ Գիրքը:

Ինչպէ՞ս պէտք է ուսումնասիրել Ս.
Գիրքը: Ասոր համար մի քանի մե-
թոտներ կան:

1. Ուշագրութեամբ և մանրամաս-
նութեամբ ուսումնասիրէ: Ս. Գրքի
մասերը մեծապէս ազդուած են այն եր-
կրէն և ժամանակի պարագաներէն ուր
և որոնց տակ անոնք գրուած են: Հին
կտակարանին մէջ եզրպտական և Աստ-
րեստանեան, իսկ նոր կտակարանի մէջ
հելլենական և հռովմէական ազդեցու-
թիւնը զգալի է: Աբրահամը հասկնա-
լու համար 4000 տարի առաջուան
Քաղդէայիներու քաղաքակրթութիւնը,
կրօնքը, պատմութիւնն ու սովորու-
թիւնները պէտք է գիտնալ:

Ուր Լուսնի աստուծոյն սրբաւայրն
էր, և իր ազդեցութիւնը կը տարածուէր
մինչև Զինաստան: Աբրահամ իր որ-
դին, Իսահակը, զոհ մատոյց: Աւե-
տարանի լոյսով կ'ըսենք թէ Աստուած

մարդկային զոհի յօժար չ'ըլլար: «Եւ
Տէրը ըսաւ. Տղուն ձեռք մի՛ դպցնիր և
անոր բան մը մի՛ ընէր»: Արդ՝ ու-
սումնասիրէ՛. ասիկայ իրական գէպք
մըն է, զոր Աւետարանն ալ կը հաստա-
տէ: Աստուած իրապէս փորձեց Աբ-
րահամը. ասիկա աւանդութիւն կամ
առակ մը չէ այլ իրական գէպք մըն է:
Աբրահամի ժամանակին սովորութիւն
էր մարդը, նոյն իսկ զաւակը Աստուծոյ
զոհ մատուցանել: Աբրահամ ուզեց իր
սիրելին զոհել իր սիրած Աստծոյն, բայց
Աստուած արգիլեց:

2. Ս. Գիրքը ուսումնասիրէ՛ զայն
մասերու բաժնելով: Անոր մէջ պատ-
մական, օրէնքի յատուկ, ընտանեկան
կեանքը կրթող և քաջալերող մասեր
կան: Զանոնք զատ զատ ուսումնասիրէ:
Ս. Գրքին ամէն մէկ մասը պէտք է
կարդայուր. բայց կան հատուածներ
զորոնք ներելի չէ ընտանիքի մէջ և
բնմի վրայ կարդալ:

3. Ս. Գրքի նիւթերը զատ զատ ու-
սումնասիրէ: Քրիստոնեան համարաբ-
առ լը թող ունենայ, և անկէ նիւթե-
րը—զօր օր. սէր, արարչագործութիւն,
խաղաղութիւն, մեղք, երկինք—քաղե-
լով թող կարգայ: Եւ կամ մէկ անգա-
մէն մէկ պատմութիւնն ամբողջ—Եսթե-
րի, Աբրահամի, Յակոբի,—թող կարգայ:

Սովայն սա երկու բաներուն առե-
լի ուշագրութիւն ըրէ: Ա. Ս. Գրքին՝
իր իսկ ըսածէն աւելին մի՛ վերագրեք:
Ս. Գիրքը չ'ըսեր թէ ինք դասագիրք
մը կամ պիտական զիրք մըն է:
Ռաբին՝ գիտական նիւթերու համար
անոր վրայ հեղինակութիւն մի՛ գնեք:
Արեգակնային գրութեան մասին խօսե-
լու համար Ս. Գրքին մի՛ դիմել: Եր-
կիրը կը կենայ և արեւը անոր շրջը
կը զառնայ, այս կանոնը Ս. Գրքէն չի
եղեր: Բ. Ս. Գրքի պնդած կէտերէն
բան մը մի՛ պակսեցնիր: Երբ արար-
չագործութիւնք կը գրուէր՝ անոր

գիտական մէկ պատմութիւնը չգրուեցաւ. անոր նպատակը այդ դարին երեք մեծ սխալներուն դէմ պատասխանել էր, որոնք էին 1) Ամէն բան աստուած է (համայնաստուածութիւն), 2)

չափ աստուածներ կան, 3) Աստուած չի կայ: Մովսէս ըսաւ. «Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց»: Ե՞րբ, «Սկիզբէն»: (Շարունակելի) ԵԿԲ. ՇՆՈՐՀՕՐԵԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Աշխարհածաւալ տնտեսական տագնապին պատճառները բազմաթիւ և կարեւորութեամբ իրարմէ շատ տարբեր են: Այս պատճառները ամէն երկրի մէջ կատարելապէս նոյնը չեն և նոյն համեմատութեամբ ազդեցութիւն չեն ցուցներ: Միմիայն տեղական եղող պատճառներ ալ կան, քանզի ոչ մէկ երկիր տնտեսապէս ուրիշ ոչ մէկ երկրին վիճակակից կրնայ ըլլալ շատ մը կէտերու մէջ: Հոս կ'ուզենք ընդհանուր պատճառներէն ոմանք կարճ կերպով յիշել:

1. Տնտեսական տագնապին մեծագոյն, ամէնէն հիմնական, ամէնէն ընդհանուր պատճառը չափազանց արտագրութիւնը, պէտք եղածէն աւելի ապրանքի պատրաստութիւնն է: Համաշխարհային հրապարակը այսօր լեցուած է ոչ թէ միլիոնաւոր սկիւններ այլ հազարաւոր միլիոններ արժող մեքենաներով, գործիքներով, ամէն տեսակ հիւսուածեղէնով, արմատիքով, կենդանիներով, հանքերով, չգործուած ատաղձներով որոնք այսօր չեն ծախուիր, և չեն կըրնար ծախուիր: Գնող չկայ, կամ աւելի չի տակը գնողներու թիւը շատ սահմանափակ է:

Մեծ պատերազմի միջոցին ստիպողաբար շատ մը գործարաններ փակուած, սովորական առարկաներու, ապրանքի արտագրութիւնը դադրած, ընդարձակ հողեր կամ ոտնակոխ եղած կամ անմշակ թողուած, և միայն ռազմանիւթ պատրաստող հին և նոր հաս-

տատութիւններ գործած էին: Բանւորներուն կարեւոր մէկ մասն ալ պատերազմով զբաղած ըլլալով արտագրութիւնը մեծապէս նուազած էր: Երբ զինադադար եղաւ և խաղաղութիւն հըռչակուեցաւ ամէն տեղ սկսան գործել այս պակասած ապրանքի, արմատի տեղը լեցնելու համար: Գործարանները բացուեցան, նորեր հաստատուեցան, աւերակ գիւղեր շէնցան և այսպէս խոպանացած հողեր սկսան մշակուիլ, կորսուած հարստութեանց տեղը չենցնելու համար ամէն ջանք կատարուեցաւ, ամէն մարդի մէջ տնդոտ գործունէութիւն մը ծայր տուաւ: Նոր առեւտրական ընկերութիւններ, սէնտիքաներ կազմուեցան, նոր մեքենաներ հնարուեցան, և ազգերու միջեւ աննախընթաց մրցակցութիւն մը յառաջ եկաւ: Արձակուած միլիոնաւոր զինուորներ գործի լծուեցան: Բանւորի վարձքը, կալուածի գինը բարձրացաւ: Կարճ շըրջանի միջոցին ահապին հարստութիւններ գիւղեցան. աշխարհը մոլեգնօրէն մեծ հարստութիւններ շինելու հետամուտ եղաւ: Իտալիոյ, Գերմանիոյ, Ֆրանսայի, Անգլիոյ, Ճաբոնի և մանաւանդ Ամերիկայի գործարանները սոսկալի թափով սկսան գործել: Հինգ վեց տարի չանցած աշխարհի պէտքը գոհացում գտաւ, ապրանքը պէտք եղածին չափ և նոյն իսկ աւելի արտագրուեցաւ. ժողովուրդը կշտացաւ, բայց չուտով հարստանալ ուղղողներու աչքը չյաղեցաւ: Հարստութիւն չինելու գործունէ-

ութիւնը նոյն թափով 3—4 տարի ալ չարունակեց: Վաճառատունները լեցունեցան, սպառումը քիչցաւ, վաճառումը պակսեցաւ և տեղ տեղ բոլորովին դադրեցաւ: Տագնապը, սարսափելի տաղնապը ծայր տուաւ, գիներու մէջ անկումը սկսաւ, վարձքերը զեղչուեցան, գործարանները փակուեցան, անգործներու թիւը ամէն երկրի մէջ միլիոնները գլեց անցաւ: Կարգ մը տեղեր շտեմարաններու մէջ փտտող ցորենը իբր փայտ վառեցին: Մօտերս Պրագայի մէջ սուրճի մեծ ընկերութիւն մը մօտ կէս միլիոն տուար արժէքով սուրճը Ատլանտեան օվկիանոսը թափեց, իր վաճառատուններուն մէջ պատրաստ սուրճի քանակը պակսեցնելու համար, որպէսզի սուրճի գինը անկում չկրէ:

Երկրագործական արտադրութեանց մէջ ալ արտադրութեան նոյն չափազանցութիւնը կը տեսնենք: Այսօր աշխարհի ցորենի հրապարակին վրայ սարսափելի տաղնապ մը կայ: Ռուսմանիոյ, Եուկո-Սլաւիոյ, Պուլկարիոյ, Հունգարիոյ, Արժանթինի, չափով մը Մ. Նահանգացի մէջ անչափելի քանակով ցորեն և արմտիք մարարներու մէջ կը փտին. և հողագործները կը սնանկանան: Այս դարմանելու համար մօտերս ցորենի միջազգային խորհրդագագաժողով մը կատարուեցաւ: Եզիպտոսի ելիւմտական տագնապին գլխաւոր պատճառը իր բամպակին չծախուիլը, այսինքն պէտք եղածէն շատ աւելի տնոր արտադրուիլն է: Զիշէ նոյնը կըրնայ ըսուիլ նաև քարիւղի, սուրճի, տախտակի, բուրդի, արջառի, ոչխարի և խոզի մասին:

Զմտունանք որ բոլոր աշխարհի վրայ ժողովուրդներուն չափազանք չքաւորութիւնը այս տաղնապը աւելի կը սաստկացնէ. ժողովուրդը եթէ աւելի ունեւոր ըլլար բնականաբար աւելի ապ-

րանք և արմտիք ծախու առնելու կարող պիտի ըլլար:

Հիմնական պատճառը այս ըլլալով տնտեսական տագնապին իբր երկրորդական պատճառները հետեւեալ կէտերը կրնանք յիշել:

2. ԲԱՐՁՐ ՄԱՔՍԵՐ: Մաքսը կը դըրուի ներքին արհեստները պաշտպանելու կամ կառավարութեան հասոյթ ապահովելու համար, շատ մը տեղեր անկը դրուի մասամբ թէ՛ մէկուսն և թէ՛ միւսին համար: Պատերազմէն ետքը շատ մը տեղեր պետութիւնները մաքսերու սակը շատ բարձրացուցին, և երբեմն այն աստիճան որ դրացի երկիրներէն կարգ մը առարկաներու ներածումը անկարելի եղաւ: Ծայրայիղ ազգայնականութիւնը և կարգ մը քաղաքական նկատումներ այս միտումին աւելի ոյժ տուին: Եւրոպական և Ամերիկեան շատ մը երկիրներ՝ անագին պարկապուհութեամբ բարձր մաքսերու պատուարներով չըջափակուած են դրացի երկիրներուն ներածումներուն դէմ: Մաքսային սոսկալի պատերազմ մը կայ: Մ. Նահանգացի կողմէ մաքսերու բարձրացումը մեծ ազդեցութիւն ունեցաւ համաշխարհային տաղնապին վրայ: Բոլոր այս բարձր մաքսերը միջազգային արտադրոյթի և սպառումի միջև տեղի ունենալիք բնական հաւասարակշռումը անբնական կերպով խանգարած է և կը խանգարէ:

3. Փորձագէտներու կարծիքին համեմատ քաղաքական աշխարհի մէջ տեսնուած անհաստատութիւնն ու նորոշութիւնն ևս կ'ազդեն այս տաղնապին վրայ: Մեծ պատերազմի պատճառաւ յառաջ եկած տակնուվրայութիւնը և անհաւասարակշռութիւնը տալիս կատարելապէս չդարմանուեցան: Ինչ չէ թիւը նաև այն պետութիւններու որոնք կնքուած դաշինքները վերջնական նկատել չեն ուզեր: Փափաքուած անգործութիւնն ու ապահովու-

թիւնը տակաւին յառաջ չեկաւ: Այս պատճառաւ այսօր պետութիւնները ըստ պառնալիսութեանց համար տարեկան հինգ հազար միլիոն տոլար, այսինքն պատերազմէ տալիս եղածէն աւելի կը ծախսեն: Վերջին վեց տարիներու միջոցին բոլոր պետութիւնները, բացառելով Անգլիան ու Ճաբոնը, իրենց զինեռնական ծախքերը քիչ կամ չատ աւելցնեցին: Այս ահազին ծախքերը անշուշտ ժողովուրդին քսակէն կ'ելլեն, և այս կերպով ժողովուրդի գնելու կոթողութիւնը մեծապէս կը տկարանայ: Իրարու հանդէպ անվստահութիւն, և կասկած բնական կերպով վարկը կը կոտրէ, և տագնապը կը ռաստահացնէ:

4. Պատերազմական պարտքերու վճարումի, հաշուեյարդարումի հարցն ալ տակաւին կատարելապէս չէ լուծուած: Տնտեսական տագնապին մէկ պատճառքն ալ ահա այս է: Մեծ պետութիւնները պատերազմի տոթիւ ներքին մեծ փոխառութիւններէ զատ արտաքին ահազին փոխառութիւններ ալ ըրին, որոնց տարեկան տոկոսը կամ մասնաւորաբար վճարելու դատապարտուած են այսօր: Այնպէս կը հաշուեն թէ Եւրոպա այսօր Ամերիկայի 9 հազար միլիոն տոլար կը պարտի: Միայն Անգլիա ռաբաղուած է տարեկան 165 միլիոն տոլար վճարել Մ. Նահանգներու: Եւրոպա Անգլիոյ ալ մեծ գումարներ կը պարտի: Գերմանիա, եթէ չեմ սխալիր, մօտ 200 միլիոն տոլար կը վճարէ մեծ պետութիւններու իբր պատերազմական վնասուց հատուցում: Պարտեալ միւս պետութիւններն ալ դատապարտուած են տարեկան քիչ կամ շատ փնասի հատուցում ընելու: Պատերազմի պատճառաւ վերջին ծայր փոքրատեսակ ժողովուրդին համար այս պարտքերու վճարումը շատ ծանր բեռ մըն է, որ ընդհանուր տագնապի շա-

րունակուելուն մեծապէս կ'ազդէ: Ներկայիս Գերմանիոյ անցուցած ելեւմտական տագնապը ասոր լաւագոյն մէկ օրինակն է:

5. Մ. Նահանգաց մէջ 1929 ի Հոկտեմբերին տեղի ունեցած ծանօթ սակարանային սարսափելի անկումը՝ առաջին գէպքն էր որ առաջին անգամ ըլլալով ներկայ տագնապի սուր հանգամանք մը տուաւ: Նշանաւոր ելեւմտագէտի մը մօտերս կատարած հաշիւին համեմատ այս անկումը 41 հազար միլիոն տոլար արժած է Մ. Նահանգներու: Այս գէպքը Եւրոպական հրապարակն ալ ցնցեց. և անոր ազդեցութիւնը տակաւին մինչեւ այսօր ամէն կողմ կը շարունակէ: Մ. Նահանգները երկու տարիէ ի վեր տակաւին ինքզինքը չկրցաւ գտնել, իր անկողնիներուն թիւը տակաւին չ'սկսաւ պակսիլ, և մօտերս պակսելու երեւոյթն ալ չունի: Յառաջիկայ ձմեռուան համար հիմակուանէն մարդիկ մտահոգուած են: Այս անշահաբերութեան վախճանը տակաւին անկարելի կը գտնեն զուլակիլ: Շատ բնական է որ աշխարհիս ամէնէն հարուստ, ելեւմտագէտ ամէնէն զօրաւոր պետութեան այս վիճակը բոլոր աշխարհի տնտեսական և ելեւմտական կոցութեան վրայ մեծ ազդեցութիւն պիտի ունենայ:

6. Խորհրդային Ռուսիոյ ընդհանուր տնտեսական գործունէութիւնն ալ, մանաւանդ Տրեքինկ կոչուած գործիակերպով, — այսինքն շատ մեծ քանակութեամբ և շատ տծան գինով — աշխարհի հրապարակին վրայ արմատք, փայտէ տաղձներ և զոնազան չգործուած նիւթեր թափելը՝ մեծապէս ազդած է և տակաւին կ'ազդէ ընդհանուր տագնապին ծաւալելուն և սաստկանալուն:

Թէ ի՞նչ է ընդհանուր տագնապի դարմանը, այս պիտի ըլլայ մեր յաջորդ յօդուածին նիւթը:

ԶԷՆՈՒ ՊԵՋՃԵԱՆ

ՄԱԿԵՂՈՆԻՈՑ ԵՒ ԹՐԱԿԻՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՅՑ ՄԸ

Եկեղեցիին մասնաւոր կարգադրութեամբ Մակեղոնիոյ և Թրակիոյ արեւելեան մասը այցելեցի: Երեք շարաթ տեւող այս այցելութեան նպատակը հոգեւոր էր: Ամէն տեղ մի քանի օր մնալով Աստուծոյ խօսքը քարոզեցինք: Ասիկայ ամփոփ կերպով ներկայացնելով՝ ընթերցողներէն կը խնդրեմ որ այդ տեղերուն համար աղօթեն:

1. — ՏՐԱՎԱԹԱՆ հոս կը գտնուին Ատանայի կուսակալութենէն 22 թրքախօս Հայ ընտանիքներ, զուրկ եկեղեցիէ և դպրոցէ: Ասոնք ունին դպրոցական տարիքին մէջ 40 պզտիկներ, որոնց մէկ մասը հելլէն դպրոցի կը յաճախէ:

Անցեալ տարուան վերջին ամիսներուն Շուէտցի միսիոնարուհի Օր. Ա. Եուհանսընի կարգադրութեամբ ուսուցիչ մը զբիւրեցաւ Փրոփաթա: Տիրար Սարգիս Գըզըլեանի մանուկներու կըրթութեան մասին ըրած ջանքերը, կատարած ընտանեկան այցելութիւնները և կիրականօրեայ հոգեւոր պաշտօնները շատ օգտակար եղած են:

Ժողովուրդին փափաքով երկու անգամ հոգեւոր պաշտօն կատարեցի: Կիրակի առտուն վերջին պաշտօն մ'աւ կատարելէ ետքը նոյն օրուան իրիկունը Սէրէզ երթալով տեղւոյս Յոյն Աւետ. եկեղեցիին մէջ քարոզեցի:

2. ՄԵՐԷՁ: Հոս 105 ընտանիքներէ բաղկացեալ հայութիւն մը կայ, որ իրենց ջանքերով և բարեգործ բարեկամներու օգնութեամբ տուն մը ծախու աւած են: Պէտք եղած փոփոխութիւնը և նորոգութիւնը կատարելէ ետքը զայն եկեղեցական և դպրոցական նպատակներու համար կը գործածեն: Դպրոցի աշակերտութեան թիւն է 200, ուսուցիչներունը՝ երկու: Կրօնական պաշտօններու համար կայ քահանայ մը:

Սէրէզի աւետարանական համայնքը կազմուած է 15 Յոյն և Հայ ընտանիքներէ, որոնք միասին կը կատարեն իրենց կրօնական պաշտօնները: Իրենց քարոզիչն է Պատ. Տիամանտփուլուս: Այս փոքր ժողովուրդը շինած է քարէ նոր շէնք մը, զոր թէ իբր ժողովարան և թէ իբր երկրատուն կը գործածեն: Կիրականօրեայ պաշտօնին աւելակաւծէս աւելի Հայեր ներկայ դա՛նուեցան:

Սէրէզի դաշտին 50 գիւղերուն մէջ կ'ըսուի թէ մօտաւորապէս 100 Հայ ընտանիքներ կան:

3. ՏՐԱՄԱՆ հոս կան 185 Հայ ընտանիքներ, որոնք իրենց վարձած մէկ շէնքը եկեղեցական և դպրոցական նըպատակներու համար կը գործածեն: Դպրոցը ունի 120 աշակերտներ և հինգ ուսուցիչներ: Քահանայ մը կը կատարէ հոգեւոր հովուութիւնը: Հայ աւետարանականները մի քանի ընտանիք են, որոնցմէ մէկուն տունը հաւաքուելով հոգեւոր պաշտօն մը կատարեցինք: Մեր հասկցածին համեմատ Տրամայի շրջակայքը 100 Հայ ընտանիքներ կան:

4. ՓԻԼԻՊՊԷ: Ասիկայ թէպէտ աւերեալ բայց պատմական քաղաք մ'ըլլալուն համար զբօսաշրջիկներու յաճախ այցելած մէկ կիւրտնը եղած է: Քաղաքս ատենօք Հռովմէական կայսրութեան յայտնի կեդրոններէն մէկը եղած էր: Այս նախկին Քրէնիտիս անունով ծանօթ գիւղը, հիւսիսէն եկող բարբարոս յարձակումներու զէմ իբր պատուար գործածուելու համար Մեծն Աղնքսանդրի հօր Փիլիպի կողմէ ընդարձակուեցաւ և այդ թագաւորին անունը առաւ: Գործք. 16. 12ի մէջ կը կարդանք որ մեծ թիւով զաղթականներ շրջուած են հոս:

Պօղոս Առաքեալ ահա այս նշանաւոր քաղաքը այցելեց, և հոն Քրիստոսը

քարոզեց, և Հիդրոյի և բանտապետի փրկութեան պատճառ եղաւ (գործք. 16)։ Պօղոս հոս յաւիտենական կայսրութիւնը հաստատեց։ Փիլիպպէի և Կեղեցին Պօղոսի հանդէպ մեծ կարեկցութիւն ունէր։ Բանիցս նիւթական օգնութիւնը բրած է Պօղոսի (Բ. Կորն. 7 5, 11. 9, Փիլ. 4. 15)։

Պօղոս Առքեալ Հռովմի բանտէն զըրկած իր չորս նամակներուն վերջինը Փիլիպպեցւոյ գրած է։

Թիւատիրցի Լիդիայի դարձին տեղի ունեցած վայրը կայնելով լուռ ազօթեցի։ Օգոստոսի կայսրութիւնը միայն պատմութեան մէջ կը յիշուի, չէն Փիլիպպէ քաղաքը աւերուած է. բայց Առաքեալի հոս սկսած գործը տակաւին կը շարունակէ։

5. ՆԵՒՊՈԼԻՍ։ Ասիկայ հին Փիլիպպէին ահա հանդիսան էր, բայց ներկայիս շատ բարդաւած և մօտ 100000 հոգի բնակչութեամբ մեծ քաղաք մը եղած է։ Հիմա Գաւալա կը կոչուի։

Հոս 250 Հայ ընտանիքներ կան։ Իրենց յատուկ շէնքէ մը թէպէտ գուրկին բայց եկեղեցիի և դպրոցի համար մասնաւոր կարգադրութիւն մը եղած է։ Դպրոցի աշակերտութեան թիւն է 200։ Այս դպրոցին մէջ ուշագրաւ կէտ մը սա է թէ անոր մէջ երեք Հայ յարանուանութեանց պետերը, — Առաք. քահանան, Կաթողիկ վարդապետը, և Աւետ. հովիւը — նոր սերունդին կըրթութեան համար ձրի և կամաւոր կերպով կ'ուսուցանեն։ Եկեղեցական և ազգային բոլոր գործերուն մէջ անոնց և բոլոր գործիչներուն սիրալիր գործակցութիւն կը մաղթենք։

Տօյ Հիւլիֆ'սպունտ միախոնարական ընկերութիւնը թէ՛ Գաւալա և թէ՛ շրջակայքը աւետարանչական գործ կը կատարէ։ Այս ընկերութեան ներկայացուցիչը, Օր. Աննա Եէնսըն, 1908 էն ի վեր այս գործով զբաղած է։ Նախ

երկար ատեն Խարբերդ աշխատած է, ուր սորված է նաեւ հայերէնը։ Մեծ պատերազմի միջոցին իր գործը Հալէպի մէջ շարունակած է, և հիմա կ'աշխատի Գաւալա։ Իր ընկերութեան գործունէութեան մասին հետեւեալ ծանօթութիւնները իրմէ քաղելով կը ներկայացնեմ։

Ընկերութիւնս 1896—1919 զործած է Թուրքիոյ հինգ ծանօթ քաղաքներուն մէջ, ուր ունեցած է որբանոցներ, զըպրոցներ, հիւանդանոցներ և վարժապետանոց և Աստուածաբանական զըպրոցէ ուսումնաւարտ գործիչներ յառաջ բերած է։ 1919 ին որբանոցները յանձնած է Ամերիկեան Րիլիֆի, և Մարտի մէջ միայն վեց հիւանդապահներ ձգելով միւս վայրերէն քաշուած են։ Հիւանդապահները տակաւին կը գործէն Մարաշի մէջ։ Ներկայիս Պուլկարիոյ չորս կեդրոններուն մէջ իր գործը կը շարունակէ Թուրքերու և Հայերու մէջ։

Յունաստանի մէջ 1923 ին Սելանիկ կ'սկսի գործի, և ապա Գաւալա փոխադրուելով հոն կը շարունակէ գործել։ Գաւալա և շրջակայքը 81 որբերու թէ՛ ապրուստը և թէ՛ կրթութիւնը ապահոված են։ 51 ծեր ալրիներու հաղուստին և ուտեստին կ'օգնեն։ 60-80 կիները ասեղնագործութեամբ կը պարսպին, ասոնց կը վճարեն ամսական 50 անգլ. օսկի։ Երկու հիւանդապահներ՝ մասնաւոր դարմանատունի մէջ մինչեւ կէսօր ձրի դարմանութիւնով, և կէսօրէ ետքը տուները այցելելով կ'զբաղին։ Տոքթ. Խ. Գայլիւան ընկերութեան կողմէ պէտք եղած ատեն դարմանումներ կը՛նէ թէ՛ դարմանատունը և թէ՛ տուները։ Սէրէզ, Տրամա և Գաւալա գտնուող ազգային դպրոցներու նիւթապէս կ'օգնէ։ Վերջին տարին այս նպատակաւ տուած է 108000 տրախմի (327 օսմ. օսկի)։ Սէրէզի մէջ գնուած դպրոցական շէնքի արժէքին 30,000

տրախմբին այս ընկերութեան կողմէ նը-
ւիրուած է: Վեր. Յակոբ Եղիազարեան
և աւետարանչուհի մը կը գործեն՝
մասնաւոր հոգեւոր պաշտօններ, Կ.
Դպրոցի պաշտօն և այցելութիւններ
կատարելով: Նոր Տարիի և Ծնունդի
առթիւ ընկերութեան կեդրոնէն եկած
100-150 անգլ. ոսկի աղքատներու կը

բաշխուին: Կարճ խօսելով Տօյչ Հիւլֆ'ա-
պունտ միսիոնարական ընկերութիւնը
Օր. Ս. Եէնսընի միջոցաւ տարեկան
2500 անգլ. ոսկի կը ծախսէ Գաւալա և
շրջակայքը:

(Շար.)

Սեյանիկ

Կ. ՖԱՐԱՃԵԱՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔ ՈՒ ԳՈՐԾԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՁԱՊԵՏՆ ՈՒ ՆԵՐԳԱՂԹԸ

Հայաստանի ժողովմխորհի մեծա-
յարգ նախագահ Սահակ Տէր Գաբրիէլ-
եանի ներկայութիւնը Բարիվահայ գո-
ղութին համար հայրենաշունչ խանդա-
վառութեան, ինչպէս մեր Միութեան
համար սրտապնդող խորհրդակցու-
թեանց գեղեցիկ պատահութիւն մը ըն-
ծայեց:

Մեր սիրելի նախագահը առաջինը և-
ղաւ բարի վալուգտի այցելութիւն տա-
լու Հայաստանի վարչապետին, որուն
հետեւեցան Կեդր. Վարչ. Ժողովի ներ-
կայ անդամներէն փոխ-նախագահ Տ. Պ.
Իսմէրեան, իրաւագէտ-խորհրդական
Տ. Գ. Սինապեան և վարիչ-պատուի-
րակ Տ. Վ. Մալէզեան: Տ. Կիւլպէնկե-
ան քանիցս ճաշի հրաւիրելով յարգելի
Վարչապետը, կարեւոր տեսակցութիւն-
ներ ունեցաւ Հայաստանի շինարարա-
կան աշխատութեանց և գլխաւորաբար
ներգաղթի կենսական հարցին մասին:
Քաղաքացի Տէր Գաբրիէլեան փոխա-
գարձ այցելութեամբ պատուեց Միու-
թեան Կեդրոնատեղին, տեսակցելով
Վարիչ-Պատուիրակին հետ: Երէկ եւս
Նուպարեան Մատենադարանին մէջ
պաշտօնապէս այցելեց Կեդր. Վարչ.
Ժողովին, և ներկայ անդամներուն կող-
մէ վայելչօրէն մեծարուեցաւ պատուոյ
թէյնասեղանի մը շուրջ: Նախագահ Տ.

Կիւլպէնկեան իր ուրախութիւնը յայտ-
նեց որ Բարեգործականի կեդրոնական
տան մէջ Միութեան ներկայացուցիչնե-
րը պատիւը կ'ունենան ողջունելու Խ.
Հայաստանի պատուական Վարչապետը
և իրմով հաճոյքը կը վայելեն պահ մը
սրտակցելու Մայր-Հայրենիքի հետ գոր-
ինք այնքան բարձրօրէն կը մարմնաց-
նէ:

Խօսք առնելով, ժողովմխորհի նա-
խագահ Տէր Գաբրիէլեան, իրեն յա-
տուկ պարզ բայց տաք շեշտով, շնոր-
հակալութիւն յայտնեց իրեն ուղղուած
համակրական արտայայտութեանց հա-
մար և յարեց թէ խորապէս զգածուած
է այն խանդավառ ընդունելութենէն
զոր գտած է Բարիվի գաղութին ներկա-
յացուցիչներուն կողմէ: Անգամ մը ևս
յայտարարեց թէ կառավարութիւնը
որոշած է անմիջապէս ընդունիլ 6000
գաղթականներ, անոնց բնակութեան և
աշխատութեան մասին արդէն կարգադ-
րութիւններ եղած ըլլալով: Երկր յայտ-
նեց որ 4000 գաղթականի համար եւս
մինչև երկու երեք ամիս կարգադրու-
թիւններ կ'ըլլան թերեւս: Կառավա-
րութիւնը, հաւատարիմ իր հայրենա-
չէն ծրագրին, քաղաքական և տնտե-
սական նշանակութիւն ունեցող որոշու-
մը կայացուցած է մինչև երկու տարի

ընդունել 30,000 գաղթականների, որոնց ապրուստը ապահով է, բայց առաջին խումբէն վերջ բնակարանի հարցին լուծումէն կախում պիտի ունենայ միւսներուն փոխադրութիւնը և տեղաւորումը: Վարչապետը յոյս ունի սակայն որ Հ. Բ. Ը. Միութիւնը, ՀՅԴ. և հայրենակցականները պիտի յաջողին հնարաւոր ընծայել այս բանը, բնակարաններու շինութեան համար տրամադրելով զըլխաւորաբար փայտ և փոխադրութեան միջոցներ: Շեշտեց թէ այս երկուքը կը կազմեն այսօր Հայաստանի մեծագոյն կարիքը, որպէս շինարարական հզօր ուղղակիներ: Նուպարաշէնի մասին հաւաստիք տուաւ որ կառավարութեան մասնաւոր հոգածութեան առարկայ է սոյն տիպար աւանը, որ սահմանուած է ըլլալու գեղեցիկ գիւղաքաղաք մը, շնորհիւ իր զիրքին, կլիմային և հողին: Կառավարութիւնը ոչ մէկ գիւրութիւն և օդնութիւն պիտի զլանայ որպէս զի մեծ թիւով բնակարաններ կառուցուին և բազմաթիւ գաղթականներ կարենան հոն հաստատուիլ:

Սիրալիւր մթնոլորտի մը մէջ փոխանակուած խօսքերը գերազանցօրէն տրպաւորիչ էին և Հ. Բ. Ը. Միութեան մասին արտայայտուած համակրանքը և գնահատանքը, զալով պատասխանատու ամէնէն հեղինակաւոր Հայէն, բացառիկ նշանակութիւն մը կ'առնէին: Մասնաւորապէս վեր կը հանենք մեր Միութեան ձեռնարկները աւելի եւս քաջալերելու և նոր գաղթի և այլ հարցերու մասին մեզի ամէն կարելի գիւրութիւններ ընծայելու մասին կրկնուած թանկագին հաւաստիքները, որ Միութեանս մէջ մի անգամը ոգևորելու բնոյթը ունի:

Այցելելով Մատենադարանի որահները, յարգելի Վարչապետը յայտնեց նաեւ իր գոհունակութիւնը և խոստացաւ վերագարձին զրկել, իբրեւ իր այս

յելութեան յիշատակ, Հայաստանի վերջին հրատարակութեանց մէկ հաւաքածոն:

Նախագահ Տէր Գաբրիէլեանի մեկնումէն վերջ, Կեզր. Վարչ. Ժողովը յետ արձակուրդի իր առաջին նիստը գումարեց, նախագահութեամբ Տ. Կիւլպէնկեանի, որ պարզեց իր տեսակցութեանց արդիւնքը Հայաստանի ներդադրի ծրագրին մասին: Իր առաջարկութեան վրայ Կեզր. Ժողովը որոշեց անմիջապէս լծուիլ ներդադրի ձեռնարկին, ըստ համաձայնութեան, Յունաստանէն 5000 Պուլկարիոյէն 1000 գաղթականներու առաջին խումբը Պաթում փոխադրելու համար. զօրծի ըսկոհելու համար պիտի սպասուի Հայաստանի ներկայացուցիչին Յունաստան մօտալուծ ժամանումին: Նախապատուութիւն պիտի տրուի անգործ և չքաւոր գաղթական ընտանիքներուն, մանաւանդ արհեստաւոր և հողագործ աշխատաւորներուն: Ըստ այնմ յատուկ հրահանգներ պիտի զրկուին Միութեանը Եղիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին, ինչպէս նաեւ Յունաստանի և Պուլկարիոյ Մասնաճիւղերուն: Այս առաջին խումբին պիտի ընկերանան նաեւ Սուրիա և Ֆրանսա գտնուող Հայուսցիները, որոնց ներդադրը կարելի էր եղած 1927 ին, ինչպէս նաեւ ցարգ արձանագրուած որբեր և Նուպարեան, Մելքոնեան, և Քէլէկեան սաներ, որոնց համար Միութեան կողմէ առանձին վիզայի խնդրանք մատուցուած էր վերջերս:

Նկատի առնելով որ գլխաւոր դժուարութիւնը շոգինաւի հարցն է, Վարիչ-Պատուիրակ Տ. Վ. Մալեղեան անմիջապէս կը մեկնի Ժընէվ, գիմուսներ կատարելու համար Նանսէնեան Գաղթ. Պաշտօնատան, ինչպէս նաեւ Յունաստանի և Պուլկարիոյ Պատուիրակներուն մօտ, որպէս զի 6000 գաղթականներու

անմիջական փոխադրութեան համար ձրիաբար շոգեհաւեր տրամադրուին, ինչպէս որ քանիցս յոյս տրուած էր:

Աւելորդ է ըսել որ Սուրբ 15000 անտուն գաղթականներուն տեղաւորման ծրագրէն վերջ, զոր Միութիւնը ընդգրկեց, Հայաստանի ներգաղթի հսկակապ ծրագիրը կուգայ լուծել աւելն Հայոց սիրտին վրայ ճշշող կնճռոտ հարց մը, վերջ գնելով հաղաթափ անպորժ և անտիրական գաղթականներու հետգհետէ շիշտուալ թշուառութեան: Տարակոյս չունինք որ Միութեան անգամները և առհասարակ սրտցաւ աղ-գայինները իրենց նիւթական օժանդակութիւններովը կարելի պիտի դարձնեն կրկին ծրագիրներուն իրագործումը, որպէս գերազանցօրէն օգտակար և արմատական կարգադրութիւն մը յօգուտ աստանդական գաղթականներու:

Բարիկ, 4 Սեպտ.

ԴԻԻԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ Սեւանայ լիճը ծովումակերեալէն 1925 մէթր բարձր է: Ծարտարագէտները կը խորհին մակերեսը 50 մէթր իջեցնել որ անոր ծաւալը 7 անգամ պիտի պզտիկցնէ: Այս կերպով շրջակայ անջրդի վայրերը պիտի ոռոգեն և վեց ելեքարակայաններ պիտի շինեն:

Հ. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ Ը. Միութեան և Բիւրֆի կողմէ որոշուած է 100 որբեր Յունաստանէն Ֆրանսա փոխադրել. 30 որբեր արդէն փոխադրուած են, որոնք մէկ տարուան համար պայմանադրուած են գիւղական աշխատանքներ կատարել հոն:

ՅՈՒՆԱՀԱՅԵՐՈՒՆ մէկ երբորդը անգործ է, Հիւլէն Կառավարութեան մէկ վիճակագրութեան համեմատ:

ՆԿԱՐԻՉ ՍԱՐԳԻՍ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, որ տտենէ միվեր Պարսկաստան կը գլուխուէր պարսկական նկարներ գծելու,

ընդօրինակելու համար, և Պարսիկ կառավարութեան կողմէ մեծապէս գնահատուած և մեծարուած էր, հիմա Փարիզ դարձած է: Լուվրի թանգարանապետ Մ. Մէթման և Պարսիկ գեապանը անոր աշխատանքը այցելած են: Մ. Մէթման իր հիացումը յայտնած է Պաշտօնական Պարսիկ նկարներուն մասին, և գեապանի հետ յայտնած է թէ յառաջիկայ պարսկական արուեստի ցուցահանդէսին մէջ իր նկարները պիտի ցուցադրուին:

ԷԶՄԻԱՅՆԱՅ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ և կաթողիկոսական ընտրութիւնը պիտի կատարուի յառաջիկայ աշունը, Հայաստանի վարչապետ Տ. Գարրիէլեանի հաստատմանը համեմատ:

ԱՆԹԻԼԻԱՍԻ Ընծայարանին մէջ ուսուցչական պաշտօն կատարելու համար հրաւիրուած է ասանայի Տիար Բիւզանդ Եղիական, որ ներկայիս Հալէպ կը գտնուի: Տիար Եղիական Աթէնքի Սքուլ ազ Բիւրճընի ուսումնաւարանէն է, որ տարի մը ետ Եւրոպա ուսանելէ հետքը ժընեի Հայ Դպրոցին մէջ իր ուսուցիչ կը պաշտօնավարէր: Ծանօթ է իր լուրջ և շինիչ յօդաւածներով: Ծնորհատրելի է այս արժանի ընտրութիւնը:

ԿԸ ՏԵՂԵԿԱՆԱՆՔ որ Միսիս Է. Մէրիլ, որ Տր. Ճ. Մէրիլի հետ արձակուրդի առթիւ Ամերիկա կը գտնուի, վերաբուժական պատիկ գործողութեան մը ենթարկուած է որ յաջող անցած է:

ՊՅՁ՝ ՀԱՅ ՄԲՈՒԼ, Հալէպ, պիտի սկսի իր յառաջիկայ շրջանը Սեպ. 30ին: Արձանագրութիւնները պիտի կատարուին Սեպ. 28, 29ին: Զուլցերիայէն Մ. Էրնէսթ Պիլբարձր կարգերու պատմութեան գտները պիտի աւանդէ Քրանսերէն լեզուով, և Ժուառ Էֆ. Այնթապի պիտի տայ արաբերէն գտները: Բընագիտական և քիմիաբանական աշխատանքներու համար շատ մը գոր-

ծիքներ, եւ առարկաներ ինչպէս նաեւ գրագարանի համար շատ մը նոր գիրքեր ծախու առնուած են:

Ե. Բ. ԶԱՆԻՑԻ ԷԶՐ

ԱՆ ԻՄ ՀԱՅՐԱՒ

Կը պատմուի թէ անգամ մը նշանաւոր Հոգեմայիցի կայսրերէն մին շատ մը յաղթանակներով տուն կը վերադառնար: Փողոցները բազմութեամբ լեցուն էր. մարդիկ իրենց սիրելի կայսրը գլխաւորելու ելած էին: Զինուորներ ամբողջ միջոց եւ մղելով ճամբաները բայ պահելու կը ջանային: Յանկարծ փոքրիկ տղայ մը մարդոց մէջէն դուրս նետուելով փողոցին մէջ կայնեցաւ եւ կայսրին եկած կողմը դիտելու սկսաւ: «Տղա՛յ, ե՛տ քաշուէ՛, կայսրը կուգայ», պոռայ գինուոր մը, աղուն թեւէն բռնելով: «Բայց ան իմ հայրս է», ըսաւ տղան, անդդուելի վստահութեամբ եւ հպարտութեամբ:

Պողոս ալ այս տեսակ վստահութեամբ մը իր բարեկամներուն գրեց «Մենք Աստուծոյ որդիներ ենք»:

ԵՈՒՀԱՆՆԱՍ Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԶԱՐՄԱՆԱԼԻ ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ

Զահլէ եւ Պէյթրյաս երկու գեղեցիկ ամառանոցներ են, մին Լիբանանի իսկ միւսը Մուսս Տաղը ի կուրծքին վրայ բազմած. երկուքն ալ օժտուած են բնական գեղեցկութիւններով պաղ ջուրով եւ առողջարար օդով. բազմաթիւ անհայտներ եւ ընտանիքներ հոն կ'երթան քաղցը եղանակը հոն անցնելու եւ կազդուրուելու համար: Սակայն ի՞նչ վարձմանալի հակադրութիւն, մինչ այդ շրջանը Զահլէի Հ. Աւետ. եկեղեցիին համար օրհնութիւն մըն է Պէյթրյասի համար աղէտ մը եղած է: Հոն եկեղեցին կը լեցուի հոս կը պարպուի: Հոն նոր դործունէութիւն եւ եռանդ կ'ստեղծուի:

հոս թուրութիւն եւ անգործութիւն կը տիրէ: Ինչո՞ւ արդեօք: Որովհետեւ Զահլէ գաղտնիքը կը մասնակցին եկեղեցական պաշտամունքներուն եւ կը սատարեն անոր ամէն կերպով մինչդեռ Պէյթրյաս գաղտնիքը որոնց մէջ կան եկեղեցիի եւ Զանիցի անգամներ, կիրակի օրը պաշտամունքի ժամանակը սրճարաններու եւ տուններու մէջ գրօնելով կ'անցնեն: Մարդ միթէ միայն իր հայրենիքին եւ ծանօթներուն մէջ պարտաւոր է Տիրոջ օրը Սուրբ պահելու եւ եկեղեցի յաճախելու:

ՔԻՉ ՄԸ ՄԵՋՄԷ ԴՈՒՐՈ

Նոր Աւետարանի թիւ 16ին Զանիցի էջին մէջ կարդացինք, թէ Էմմանուէլ եկեղեցւոյ Զանիցի կողմէն պատուիրակութիւն մը այցելած է Սուէյաթոյ շրջանը՝ հոգեւոր եւ ընկերային ծառայութիւն մատուցանելու համար: Փոքրիկ եւ աննշան լուր մըն էր ան եւ սակայն կարեւոր, շատ կարեւոր: Ինչո՞ւ.

(Ա.) Ան կը ցուցնէ որ Զանիցը ըսկսած է ինքնիրմէ դուրս ելլելու եւ ուրիշներուն համար աշխատելու: Զանիցը մինչեւ հիմա աշխատած է ապրիլ այսինքն չի մեռնիլ, իսկ հիմա նա ըսկսած է ապրիլ այսինքն գործել:

(Բ.) Նա ըմբռնած է իր կոչումը, որ է հասնիլ տկար, աջակցութեան կարօտ անհատին, կամ եկեղեցիին եւ օգնել նոր Յիսուսի անունով:

Բաղձալի է որ այս շարժումը սկսի Սիւրբոյ բոլոր Զանիցներուն մէջ: Ժամանակ է որ քիչ մենք միգրէ դուրս ելլենք. նոյնիսկ գործի շատութեան եւ ծանրութեան տակ մոռնանք մենք զմեզ:

صاحب الامتياز والمدير المسوق
القس ق. هاروتونيان